Մատենաշարան «Գարուն» Թիւ 3

Թատերական Թիւ 1

ՅՈՎՍԷՓ ԳԵՂԵՑԻԿ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ՅԵՐԻՍ ԱՐԱՐՈՒԱԾՍ

Գրեց ԹՈՎՄԱՍ ԹԵՐԶԵԱՆ

891.99
Թ-52

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Տպարան եւ Գրատուն Յ. Գ. ՓԱԼԱԳԱՆԵԱՆ

Կ·ՊՈԼԻՍ, ՄԵԾ ՆՈՐ ԽԱՆ, Թիւ 55

1911

1551-
891.99
Ք-52 | Ք. Քերեզյան
Հովսեփ Գեղեցիկ

ՄԻՄ	8036	16/x80
5568		7/01

891.99
Ք-52
10 NOV 2011

Մատենադարան "Գարուն" Թիւ 3

Թատերական Թիւ 1

ՅՈՎՍԷՓ ԳԵՂԵՑԻԿ

ՅԵՐԻՍ ԱՐԱՐՈՒԱԾՍ

Գրեց ԹՈՎՄԱՍ ԹԵՐԶԵԱՆ

1551
1001/1551

Հ.Ս.Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Պետական Գրադարան
7/XI—1922
Ա. ՍԱՄՍՈՆԻՀԱՅԻ ԱՆՎԱՆ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Տպարան եւ Գրատուն Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ
Կ·ՊՈԼԻՍ, ՄԵԾ ՆՈՐ ԽԱՆ, ԹԻՒ 55
1911

06 JUN 2013
31078
2367

ԱՌ ԱՆՄԱՀ ՀԱՆՃԱՐ

ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ ՄԿՐՏՉԻ

ՁՕՆ

ՁԱՐՄԱՆԱՑ ԵՒ ՅԱՒԷՐԺ ՍԻՐՈՅ

ԹՈՎՄԱՍ ԹԵՐՋԵԱՆ

Ա. ՋՊ.

Մեր անման Պէշիկթաշլեանէն՝ ասկէ քանի մը տարի առաջ Օրթագիւղի Բարեսէր ընկերութիւնը նոր խաղ մը խնդրած էր: Բայց ինքը արդէն ըմբռնեալ ըլլալով այն անողոք ախտէն որ զինքը գերեզման տարաւ՝ ինծի յանձնեց որ Յովսէփ Գեղեցկին արտառուչ վէպը նմանողութեամբ գաղղերէնին՝ թատրոնի բեմը հանեմ: Որո՞ւ մտէն կ'անցնէր բնաւ թէ ազգը այսչափ շուտ պիտի կորսնցնէր զինքն, ու որդեկորոյս Յակովբայ նման իր նորանոր ցաւոց մէջ զինքը պիտի կոչէր ի զուր . . .

Բարեկամ մեռնիլ մը արտասուախառն հիացմամբ՝ իր շիրմին վերայ կը դնէ այս նուէրը, որ որչափ ալ ըստ ինքեան չնչին ըլլայ՝ իր յիշատակաւը նուիրական եղած է:

ԹՈՎՄԱՍ ԹԵՐՋԵԱՆ

ՅՈՎՍԷՓ ԳԵՂԵՑԻԿ

ՅԵՐԻՍ ԱՐԱՐՈՒԱԾՍ

ՅԱԿՈԲ — *Նահապետ*

ՅՈՎՍԷՓ
ՍԻՄՈՆ
ՌՈՒԲԷՆ
ՆԵՓԹԱԼԻՄ
ԲԵՆԻԱՄԻՆ
— *Որդիք Յակոբայ*

ՈՒԴՈԲԱԼ — *Հաւատարիմ Յովսէփայ*

ՄԻԻՍ ՈՐԴԻՔ ՅԱԿՈՎԲԱՅ

Թիկնապահք

Եգիպտացիք

Գերիք

ՏԵՍԱՐԱՆՆ Է Ի ՄԵՄՓԻՍ

ԱՐԱՐՈՒԱԾ Ա.

ՏԵՍԱՐԱՆՆ Է ՅԱՊԱՐԱՆՍ ՅՈՎՍԵՓՈՒ

ՏԵՍԻԼ Ա.

ՅՈՎՍԷՓ (*առանձին*)

Ի զուր չնորհապարտն Փարաւոն իղձերս լրացնել կը փութայ. այսչափ պատուոյ և փառաց մէջ դառ-

նակակիծ յիշատակներ հոգիս կը յուզեն։ Դալարագեղ հովի՛տք Բեբրոնի, հայրենի՛ դաշտեր, նման անապատ ոց հողմէն թոռմած ծաղկի մը, իմ նչդեհ մանկութիւնս ձեզմէ հեռու կը նուազի։ Ո՛վ հայր իմ Յակոբ, դու երբեմն սիրով զմայլեալ գգուանօք զիս քու ծերութեանդ յոյսն ու նեցուկը կը կոչէիր, և հիմա իմ աղետիցս վերայ արտասուելով՝ գերեզմանին դուռը կը հանիս...։ Ո՛վ անագորոյն նախանձոտ եղբարք, ձեր յանցաւոր ձեռքերը հօր մը գրկերէն զիս յափշտակեցին։ Միթէ անտարբե՞ր աչօք տեսաք իր ծնելագութ սրտին ցաւերը. զձեզ ատելու էի, ապերախտք. սակայն այսպիսի թշուառութեան մը մէջ ալ կ'իմանամ որ սիրտս ի գութ պիտի չարժի, եթէ ձեր աչաց վրայ զղջման արցունք մը նշմարեմ։

ՏԵՍԻԼ Բ.

ՅՈՎՍԷՓ, ՈՒԴՈՐԱԼ

ՈՒԴՈՐԱԼ. Ինչո՞ւ միշտ այսպէս տրտում ես, Տէ՛ր. թէ որ թշուառ է մեծն Կլէոփաս, ո՞վ ուրեմն կրնայ երջանկութիւն երազել. իշխա՛նդ Փարաւոնի, դու հաղորդ ես իր զօրութեանը, քու իմաստուն կանխատեսութիւնդ փրկեց զԵգիպտոս սովէն։ Աւագանին կը պատկառի քեզմէ. թագաւորը զքեզ կը սիրէ. ժողովուրդը կը պաշտէ. արքայից միայն տրուած պատիւները կը պատրաստուին քեզի. և վաղը յաղթական կառացդ բարձրէն պիտի տեսնես այն մարդիկը զոր երջանկացուցիր։

ՅՈՎՍԷՓ. Այո՛, իմ խնամօքս Եգիպտացիք առատութիւն կը վայելեն. բայց, սիրեցեա՛լդ իմ Ուդորալ, միթէ ուրիշ աստեղց տակ թշուառներ չկա՞ն։

ՈՒԴՈՐԱԼ. Եւ ո՞վ քեզի տուաւ, Տէ՛ր, տիեզերաց փրկութեանը հսկելու հոգը։

ՅՈՎՍԷՓ. Դու իմ ճակատագիրս չես գիտեր կամ չգիտնալ կը կեղծես։

ՈՒԴՈՐԱԼ. Այս միայն գիտեմ, որ Նեղոսի ափանց անծանօթ Աստուծմէ մը լուսաւորեալ՝ ինը տարի կայ՝ գուշակեցիր Փարաւոնի, իր ժողովրդոցը սահմանեալ ճակատագիրը։ Այնչափ մեծ երեւցաւ իրեն քու իմաստութիւնդ որ իր մատանին քեզ տալով՝ Կլէոփաս կոչեց զքեզ, և իր տէրութեան հոգը քեզի յանձնեց։

ՅՈՎՍԷՓ. Չե՞ս գիտեր ուրեմն որ Հրէից մէջ ծնած՝ հոս բերուեցայ, մոռցուած՝ գերիներու խմբին մէջ. կնկան մը ատելի նենգութեանը զոհ եղած՝ երկայն ատեն տառապեցայ սոսկալի բանտի մը մէջ, ուսկից ելլալով՝ այս պատիւներուս հասայ։

ՈՒԴՈՐԱԼ. Չէի գիտեր բնաւ, Տէ՛ր։

ՅՈՎՍԷՓ. Սորվէ՛ ուրեմն իմ թշուառութիւններս. այս երկրիս մէջ համբաւաւոր չի կրնար կոչուիլ այն արիւնը՝ ուստի ծնայ. քանզի որդի եմ ես հովուաց՝ որոնց բազմաթիւ հօտերը՝ Յորդանանու ափանցը վրայ կ'արածին։ Յակոբ է իմ հօրս անունը։ Այո՛, Աբրահամու թոռը՝ հաւուն նման առաքինութեա՛մբ երկնից հաճոյ եղաւ, և Աստուած անոր հետ դաշինք և ուխտ հաստատեց։ Տասուերկու եղբայր էինք, և ես իր սիրեցեալ Հռաքելայ երկու որդւոցը անդրանիկն եմ։ Խանդաղատանօք կը սիրէր զիս Յակոբ. այս գորովը եղբարցս նախանձը գրգռեց, ատելի եղայ անոնց աչքին։—Դեռ մանկական հասակիս մէջ, վստահութեամբ իմ չարասիրտ եղբարցս հետ եկայ՝ Սիւքեմայ պարարտ արօտավայրը, մեր խաշինքը արածելու համար։ Այն

գողտր հասակին պարզմտութիւնն ունէի և գառնուկներուս նման երկչոտ էի։ Երեք մենաւոր արմաւենեաց քով աղօթքս կը մատուցանէի, երբ՝ ո՛վ սոսկալի յիշատակ, եղբարքս զիս բռնելով՝ ցուրտ և մթին վէր մը մէջ մոլեգնաբար գահավիժեցին։ Իսկ ես անոնց կատաղութեանը դէմ դնելու համար՝ անմեղութիւնս միայն և արցունքներս ունէի։ Մահուան մօտ էի, երբ զիս իրրև գերի արարացի վաճառականաց ծախեցին։ Մինչդեռ անոնք իրենց եղբօրը արեան գինը մէջերնին կը բաժնէին, աւա՜ղ, ես կուլայի իմ հօրս և այն ապերախտներուն համար որ կը ծախէին զիս։

ՈՒԴՈՐԱԼ. Է՜հ, ի՞նչ, Տէ՛ր, յորմէ հետէ Փարաւոնի սիրելին ես և քու աչդ տիեզերաց վրայ կը տարածի, այսպիսի նենգութեան մը վրէժը չի լուծեցի՞ր։

ՅՈՎՍԷՓ. Եղբարքս են, Ուդորալ։

ՈՒԴՈՐԱԼ. Քու Աստուածդ անշուշտ պատուհասեց զանոնք։ Այս տիեզերական սովը...

ՅՈՎՍԷՓ. Ո՛վ անգութ. կը կարծես դուն որ անոնք հօրս քո՞վը ըլլան. ո՛չ միայն անոնց աղէտքները չաւելցուցի, այլ նաև ջանացի մեղմացնել. գաղտնի՝ պաշտօնեայքս Քանանու մէջ առատութիւնը սփռեցին։ Բայց քանի մը ժամանակէ ի վեր, սիրեցեալդ Ուդորալ, յորմէ հետէ բարեգործութեանցս և պատուոյս նախանձարկու թշնամիք կ'արգելուն զՓարաւոն ամէն թշուառները իրրև հպատակ խնամելէ, յորմէ հետէ արգիլեց ինքն օտարականաց օգնել, իմ ընտանիքս սովալլուկ կը տանջի։ Հայրս իսկ թերեւս կարօտ է հացի... աւա՜ղ. այս գառն յիշատակը աչքէս արցունքներ կը հոսեցնէ։

ՈՒԴՈՐԱԼ. Հանգարտէ՛, Տէր...

ՅՈՎՍԷՓ. Որոշեցի, բարեկամ։ Ե՛լ գնա՛ անյապաղ

Քերբոնի ձորը. տե՛ս, աւա՜ղ, կ'ապրի՞ դեռ արդեօք իմ հայրս. ըսե՛ս իրեն որ հոս գայ ընտանեօք և իր բոլոր աղխովը։ Թէ որ բովանդակ ժողովրդեան մը ճակատագիրը զիս աստեղ չստիպեր կենալ, ո՛հ, անշուշտ կը վազէի՝ իր ոտքը կ'իյնայի. բայց ահա հասաւ այն ժամը, յորում ամբոխը հրապարակին մէջ խռնելով՝ անհամբեր կը սպասէ ընդունել այն նպաստները, զոր կանխատես ոգւով իրեն պատրաստեցի։ Հո՛ս կեցիր դուն, Ուդորալ, ժողովէ՝ գերիներդ և ուղտերդ, և միտքդ բեր որ քեզմէ կը կախուի կենացս երջանկութիւնը։

ՏԵՍԻԼ Գ.

ՈՒԴՈՐԱԼ (առանձին)

Ինչպիսի՜ առաքինութիւն, և ի՞նչ մարդ. այո՛, Աստուած մըն է որ իրեն կը ներշնչէ. յորմէ հետէ կը կառավարէ զԵգիպտոս, անմեղութիւն, հաւասարութիւն և արդարութիւն կը տիրեն հոն։ Այլ փութանք իր պատուէրները կատարել։

ՏԵՍԻԼ Դ.

ՆՈՑՆ ԵՒ ՍՊԱՑ ՈՄՆ

ՍՊԱՑ. Տէ՛ր, մէկ քանի օտարականք խօսիլ կ'ուզեն կլէոփասայ հետ. ի զո՛ւր կ'արգելում անոնց այս պալատիս մուտքը. ետ քաշուիլ չեն ուզեր։

ՈՒԴՈՐԱԼ. Ի՞նչ կը խնդրեն ուրեմն այդ յանդուգն մարդիկ։

ՍՊԱՑ. Զեմ գիտեր. չատ թշուառ կ'երեւնան, հա-

գուստնին կը յայտնէ իրենց աղքատութիւնը. իմ խրատութիւնս անոնց ողբեր ու արցունքներ թափել կուտայ։

ՈՒԴՈԲԱԼ. Եւ ո՞րն է իրենց հայրենիքը։

ՍՊԱՑ. Հրեայք են, Քանանու երկրէն եկած։

ՈՒԴՈԲԱԼ. Քանանէ՞ն... փութա՛ կոչէ՛ զանոնք այս սրահը, և մեծարանօք վարուէ հետերնին։ (Սպայն կ'երթայ. առանձին) Ի՜նչ կը լսեմ. փութանք Կլէոփասայ աւետել այս լուրը. իր տագնապները պիտի դադրին հօրը ճակատագիրն իմանալով. (կ'երթայ)։

ՏԵՍԻԼ Ե.

ՍՊԱՑՆ ԵՒ ՕՏԱՐԱԿԱՆՔ

ՍՊԱՑՆ. (Առ օտարականս) Սի՛րտ առէք, օտարականք. մեծն Կլէոփաս կը հաւանի զձեզ տեսնել և լսել ձեզի, անյապաղ կուգայ ինքն հոս. (կ'երթայ)։

ՏԵՍԻԼ Զ.

ՈՐԴԻՔ ՅԱԿՈՎԲԱՅ

ՌՈՒԲԷՆ. Այո՛, եղբարք, մեր հարց Աստուծոյն վստահինք։ Եգիպտոսին բարերարը մեծն Կլէոփաս անշուշտ բնակարան մը մեզի կը շնորհէ այս երկրիս մէջ, որ թէև ամուլ՝ այլ կրնայ մեզ երջանկացնել։

ՆԵՓԹԱՂԻՄ. Այո՛. Աստուած մեր հարցն ըսաւ, երբոր ուխտին վէմը կ'օծէր. «Յակո՛բ, Եգիպտոսի մէջ ցաւոցդ վերջը պիտի գտնես»։

ՍԻՄՈՆ. Իսկ ես Եգիպտոսի մէջ է որ խղճի ամենէն սոսկալի խայթերը կը զգամ։

ՌՈՒԲԷՆ. Եւ ինչո՞ւ հոս աւելի թշուառ ես։

ՍԻՄՈՆ. (Ցած առ եղբարսն) Մի թէ հոս չէ՞ Յովսէփ...

ՆԵՓԹԱՂԻՄ. Ինչո՞ւ կը խորհիս միշտ թշուառ Յովսեփայ վերայ։ Աստուած ներեց մեզի անշուշտ, որովհետև այս ասպնջական երկրիս մէջ զմեզ կ'առաջնորդէ։

ՍԻՄՈՆ. Ո՛չ. Աստուած իր պահպան ձեռքը վերցուց Յակովբայ յանցաւոր որդւոց վրայէն։

ՆԵՓԹԱՂԻՄ. Չե՞ս տեսներ իր բարութիւնները, Քանանու սովէն զմեզ կը փրկէ։

ՍԻՄՈՆ. Ե՛ս եմ, դուք էք այն անիծից պատճառը որ զայնարհ պատուհասակոծ կ'ընեն։

ՌՈՒԲԷՆ. Եւ ի՞նչ մեծ յանցանք ըրինք մեք։

ՍԻՄՈՆ. Դո՞ւ կը հարցնես զայն, Ռուբէն, և Սիմոնի՞ն կը հարցնես։

ՆԵՓԹԱՂԻՄ. Ի՛նչ ուրեմն... յանցանք մը միայն պիտի թունաւորէ՞ մեր կեանքը։

ՍԻՄՈՆ. Յանցա՞նք մը կը կոչես անմեղութիւնն ու մանկութիւնը մատնել ուժին և բազմութեան. ո՛չ, եթէ սխալմունք մըն է միայն այս, իմ սրտիս վերայ ոճրագործութեան մը պէս կը ծանրանայ, և կենացս իւրաքանչիւր վայրկեանը կը թունաւորէ։

ՌՈՒԲԷՆ. Յանուն ամենողորմ Աստուծոյն, հանդարտէ Սիմէոնն։

ՆԵՓԹԱՂԻՄ. Յանուն մեր հօրն ալեացը, որ զամենքս ալ պիտի անիծէր։

ՍԻՄՈՆ. Եթէ կը վախնաք սրտիս տագնապները տեսնել, ինչո՞ւ այնպիսի երկիր մը բերիք, որ մատաց

մէջ եղեռանս յիշատակը կը զարթուցանէ. ինչո՞ւ Սիւ-քեմայ հովիտները զիս չձգեցիք ինչո՞ւ չթողուցիք որ սովին ու յուսահատութեան ճարակ ըլլամ։

ՌՈՒԲԷՆ. Ապերախտ, վրադ ունեցած բարեկամու-թիւնին յանցա՞նք մը կը համարիս։

ՍԻՄՈՆ. Ձեր բարեկամութի՛ւնը... այն վայրկենին պէտք էիք յայտնել զայն ինծի՝ երբ նենգաւոր խրատ-ներով առաքինուոյն Յովսեփայ դէմ կը դրդռէի ձեր ատե-լութիւնը։

ՆԵՓԹԱՂԻՄ. Տեսա՞ր որ լացի ես իր ճակատագրին վրայ, և նաև ներէ՛ ինձ, անիծեցի զքեզ, Սիմէոնն։

ՍԻՄՈՆ. Եւ ի՞նչ կը զօրէր քու անէծքդ. Ամենա-կալը զիս արդէն դատապարտեր էր։ Զիս անիծելու տեղ վիրաւորելու էիք այն դաշակով որով գՅովսէփ կ'ու-զէի խողխողել։

ՆԵՓԹԱՂԻՄ. Եղբայրս չէի՞ր...

ՍԻՄՈՆ. Յովսէփն ալ իմ եղբայրս չէ՞ր։

ՌՈՒԲԷՆ. Ո՛րչափ կը կարեկցինք քեզ։

ՍԻՄՈՆ. Ո՛չ, ո՛չ. Յաւիտենականը՝ զոր զայրա-ցուցի, իմ եղեռանցս ծանրութեանը տակ զիս կը ճնշէ. իր վրէժխնդիր աստուածային մատը իմ ճակտիս վրայ այսպէս դրոշմեց. «Հեռացէք, մահկանացուք, թշուառէ մը որ ալ ո՛չ բարեկամ ունի և ո՛չ ազգական. անմխի-թար հոր մը ձեռքէն ամենէն խանդակաթ որդին յափշտակեց»։

ՌՈՒԲԷՆ. Ո՛վ տարաբաղդ եղբայր, կը բաւէ կըս-կիծդ։

ՍԻՄՈՆ. Երբ տագնապներս ամոքելու համար որդ-ւոցս գիրկը կը դիմեմ, իրենց գողտրիկ գրկացը մէջն ալ աստուածային ահեղ վրէժխնդրութիւնը զիս կը հալածէ.

անոնց անմեղ ժպիտը սոսկումս կ'աւելցնէ... անոնց մանկական կերպարանքին վրայ կը կարծեմ նշմարել որ ինծի նման ապերախտ պիտի ըլլան։

ՌՈՒԲԷՆ. Մխիթարուէ՛, թշուա՛ռ։

ՆԵՓԹԱՂԻՄ. Ո՛հ, քու հայրդ ալ մտածէ՛։

ՍԻՄՈՆ. Աստուծոյ վրէժխնդիր բազուկը վրաս կը ծանրանայ (Զայն թմբկաց)։

ՌՈՒԲԷՆ. Լռութի՛ւն... ահա իշխանը իր թիկնա-պահներովը կուգայ։

ՍԻՄՈՆ. Ի՜նչպէս լռեմ, երբ երկնից ցասումն ինձ կը սպառնայ։

ՏԵՍԻԼ Է.

ՍՊԱՅՆ ԵՒ ՆՈՅՆՊ

ՍՊԱՅՆ. Օտարականք, ահա՛ Կլէոփաս, յիշեցէք որ ինքը թագաւորին պատկերն ու նեցուկն է, և արժանի մեծարանքն իրեն մատուցէ՛ք. երկիրպագէ՛ք իր զօրութեանը...

ՏԵՍԻԼ Ը.

ՅՈՎՍԷՓ, ՈՒԴՈԲԱԼ ԵՒ ՆՈՅՆՊ

ՈՒԴՈԲԱԼ. (Գաղտ առ Յովսէփ) Ահա՛, Տէ՛ր, այն օտարականք որ Եբրայեցի կը կոչեն ինքզինքնին։

ՅՈՎՍԷՓ. Սիրտս կ'այլայլի ասոնց ասջև. ո՜հ, եթէ մէջերնին եղբայրներէս մէկ քանին ըլլար։

ՌՈՒԲԷՆ. Տէ՛ր, ծունկերդ կը գրկենք. (կը չոքին)։

ՅՈՎՍԵՓ. Ոտք ելէք, օտարականք. (առ Ուղոբալ) Ի՞նչ կ՚տեսնեմ, Ուղոբալ, ասոնք իմ եղբարքս են։

ՈՒՂՈԲԱԼ. Կարելի՞ է։

ՌՈՒԲԷՆ. Տառապեալք ոմանք յանուն ժողովրդեան մը կուգանք գթութիւնդ խնդրել։

ՅՈՎՍԵՓ. (առ Ուղ.) Ահա՛ Ռուբէն, եղբարցս անդրանիկը։

ՆԵՓԹԱՂԻՄ. Անոնցմէ հովուի մը որդիք ենք, թափուր երկրիս ճոխութենէն։ Ահա՛ ոտքիդ առջև կը դնենք ամենէն թանկագին ստացուածքնիս. պիտի արհամարհե՞ս, պիտի մերժե՞ս, ո՛վ Տէր, այն խունկերը զոր Յաւիտենականին կը մատուցանենք մեր տունից մէջ։

ՅՈՎՍԵՓ. (առ Ուղ.) Նեփթաղիմայ ձայնն է, ինքը միայն իմ թշուառ ճակատագրիս վրայ արցունք թափեց։

ՈՒՂՈԲԱԼ. (առ Յով.) Այլայլութիւնդ մի՛ յայտներ։

ՌՈՒԲԷՆ. Բարերար իշխան, որուն կանխատեսութիւնը փրկեց զԵգիպտոս. ներելի՞ է արդեօք մեզ, քու աջոյդ հովանւոյն տակ ապաւինիլ։ Աւա՛ղ... Քերբոնի երկիրը, Դովթայիմայ դաշտերը, Սիւքեմայ հովիտք որ երբեմն արգաւանդ էին և ճոխ, հիմայ ամուլ դարձան...։ Սովամահ կը նուազին օրըստօրէ Աստուծոյ որդիքը.. Իսրայէլ թողուլ կը ստիպուի իր հայրենիքը, և այն սեղանը զոր Յաւիտենականին փառացը կանգնեց...

ՅՈՎՍԵՓ. (մեկուսի) Ո՛վ թշուառ երկիր. (բարձր) Եւ ի՞նչ. միթէ բոլոր ձեր ժողովուրդը Եգիպտո՞ս գաղթեց. և որո՞ւ անուամբ Փարաւոնի պաշտպանութիւնը կը խնդրէք։

ՌՈՒԲԷՆ. Յա՜նուն թշուառութեան։—Ո՛հ, մի՛ մերժեր Յակոբայ որդիքը։

ՅՈՎՍԵՓ. Յակո՞բ է ուրեմն հօրդ անունը։

ՌՈՒԲԷՆ. Այո՛, Տէ՛ր։ Այս պատկառելի ծերունին քեզի պէս ամենուն սիրելի. թշուառները կը խնամէ, զԱստուած կ՚օրհնէ, որդիքը կը սիրէ և մարդկանց երջանկութեանը կ՚աշխատի։

ՅՈՎՍԵՓ. (մեկուսի) Ո՛վ Հայր իմ։

ՆԵՓԹԱՂԻՄ. Աստուած հաճեցաւ իւր որդւոցը պահել զինքը։

ՅՈՎՍԵՓ. (մեկուսի) Փա՜ռք քեզ, Աստուած իմ։

ՆԵՓԹԱՂԻՄ. Իր վրայ ծանրացան տարիները, առանց իր հոգւոյն կորովը նուազեցնելու։ Իր զգայարանքները միայն տկարացուցին։ Աւա՜ղ. ա՛լ իր որդիքը չի կրնար տեսնել։

ՅՈՎՍԵՓ. Եւ ի՞նչպէս կրցաք թողուլ անօգնական ձեր հայրը՝ թշուառ երկրի մը մէջ։

ՌՈՒԲԷՆ. Տէ՛ր, հետերնիս է Յակոբ. Աստուծոյ կամքն այս էր։

ՅՈՎՍԵՓ. Ինչո՞ւ հոս չէ. մինա՞կ ձգեցիք արդեօք զինքը։

ՌՈՒԲԷՆ. Մեր կրտսեր եղբայրը Բենիամին՝ իր քովէն բնաւ չի հեռանար։

ՅՈՎՍԵՓ. (առ Ուղ.) Բենիամի՛ն. ո՛վ անուշ յիշատակ... Ծայրայեղ երջանկութեանս չեմ կրնար դիմանալ. (բարձր) Պիտի տեսնեմ ձեր հայրը։

ՌՈՒԲԷՆ. Մեր բազմաթիւ ծառայից, մեր կանանց ու որդւոց հետ դեռ անապատէն կ՚անցնի։ Քու պաշտպանութիւնդ խնդրելու համար բոլոր մեր ընտանեաց վերայ, հարկ համարեցանք մենք առաջ գալ։

ՅՈՎՍԵՓ. Շնորհեցի ձեզ զայդ՝ որդիք Յակոբայ, այո՛, հոս պիտի կարենաք պատսպարուիլ։

ՌՈՒԲԷՆ. Կը ներէ՞ք ուրեմն մեզի, Տէր, վրաննիս

կանգնել այն դաշտավայրին մէջ, ուսկից կը նշմարուի մեծակառոյցն Մեմփիս։

ՅՈՎՍԷՓ. Ես ձեր պիտոյքը կը հոգամ, օտարականք. պիտի տեսնաք թէ ո՞րչափ մեծարոյ է աչացս թշուառութիւնն ու ծերութիւնը։

ՌՈՒԲԷՆ. Ո՜հ, ո՞րչափ երախտապարտ եմք... (եղբարին ի ծունր անկանին։)

ՅՈՎՍԷՓ. Ոտք ելէք իմ եղբ... (մեկուսի) Ո՛ւդոբալ, ո՜հ ինչ վայրկեան... սիրտս կը տրոփէ... իմ եղբ.. (բարձր) Օտարականք, ոտք ելէք... բայց ըսէք ինծի, Յակոբայ բոլոր որդիքը առջե՞ւս են... ձեր հայրը չի՞ լար մէկուն կորստեանը վերայ։

ՆԵՓԹԱՂԻՄ. Նեթէ, ո՛վ Տէր. մահը յափշտակեց մեր Յովսէփի եղբայրը։

ՍԻՄՈՆ. (այշայշած) Յովսէ՛փ... ո՞վ է այն որ իր վրայ կը խօսի։

ՅՈՎՍԷՓ (մեկուսի) Սիմէոնն է, ակամայ սարսուռ մը կը զգամ։

ՍԻՄՈՆ. Ո՛չ, ո՛չ. մահը չի յափշտակեց զինքը, կ'ապրի յուսամ, մի միայն սփոփանքս այս է։

ՈՒԴՈԲԱԼ. Ի՞նչպէս կ'այլադունիս, Տէր իմ։

ՅՈՎՍԷՓ. Կը սարսռիմ զինքը տեսնելուն։

ՆԵՓԹԱՂԻՄ. (առ Սիմ.) Ո՜հ, տագնապայոյզ սիրտդ հանդարտէ։

ՈՒԴՈԲԱԼ. Ո՞վ վերցուց քեզի դէմ դաշոյնը։

ՅՈՎՍԷՓ. Իր դէմքը յայտնելու էր քեզի զայն. ահա՛ Սիմէոնը, տե՛ս տժգոյն է իր ճակատը, մատնիչի մը կերպարանք ունի, յուսահատութիւնն իր աղիքը կը կրծէ։

ՍԻՄՈՆ. Խիղճը զիս կը խայթէ, ինքզինքս սանձել չեմ կրնար։

ՅՈՎՍԷՓ. Գացէ՛ք ամենքդ ալ ձեր հօրը առջև և ըսէք իրեն թէ կլէոփաս այս աստեղց տակ ապաւէն մը կը շնորհէ իր ժողովրդոցը։

ՌՈՒԲԷՆ. Ի՞նչ ցնծութիւն... ո՛վ երջանիկ բաղդ... մահուան ճիրաններէն դու զմեզ կը ճողոպրես։

ՈՒԴՈԲԱԼ. Տէ՛ր, խուռն բազմութիւնը երախտագիտութեան երգերով կը թնդացնէ պալատիդ բակը։

ՊԱՐ (Արտաքոյ). Փառք բարերարին մարդկան, պատիւ ազատարարին աշխարհիս։

ՅՈՎՍԷՓ (առ Ուդ.). Օգնէ՛ ինձ, Ուդոբալ, թո՛ղ հայրս երջանկութեան օրեր տեսնէ նորէն։

ՆԵՓԹԱՂԻՄ. Աստուած մեր օգնականն է... կլէոփաս մեր թշուառութիւնը երջանկութեան կը փոխէ։

ՊԱՐ (Դուրսեն). Փառք բարերարին, Եայլն։

ՁԳԻ ՎԱՐԱԴՈՑՐՆ

ԱՐԱՐՈՒԱԾ Բ.

ԳԻՆԵՐ.—Մեմփիս կը տեսնուի. վրաններ կան որոնց առաջինը գոց ու շքեղ է:

ՏԵՍԻԼ Ա.

ՈՒԴՈԲԱԼ, ՅՈՎՍԷՓ

ՅՈՎՍԷՓ. *Ուղոբալ, պատրաստ կենան թիկնապահքս այս տեղս՝ Մեմփիսի բնակիչք չգան՝ Հրէից պաշտամունքը խոովել։*

ՈՒԴՈԲԱԼ. *Հրամաններդ կը կատարուին, Տէր. բայց պէ՞տք է որ առանձին ձգեմ զքեզ այս օտարականաց մէջ։*

ՅՈՎՍԷՓ. *Ինծի համար օտար չեն...*

ՈՒԴՈԲԱԼ. *Մի գուցէ մոլորիս, Տէր, այս մթութեան մէջ, այս խառնաչփոթ վրանները...*

ՅՈՎՍԷՓ. *Թո՛ղ սիրոս առաջնորդէ ինծի դէպ ի հօրս վրանը։*

ՈՒԴՈԲԱԼ. *Քու վրանդ է, Տէր,— Յակոբայ մտքէն անգամ չանցնիր թէ այն ճոխ բարձերուն վերայ կը հանգչի որոնց վերայ կը կրթնի իր որդին հանդիսից մէջ։*

ՅՈՎՍԷՓ. *Ի՞նչ հոգն է անոր արքայից շուքը, իր Սատուծոյն փառքը միայն կը տեսնէ, իր որդւոցը երջանկութիւնը։—Սիրոս կը տրոփէ. խնդութի՛ւն... զինքը տեսնել...*

ՈՒԴՈԲԱԼ. *Մի՛ յայտներ այլայլութիւնդ, ո՛վ Տէր, տարապայման խնդութիւնը ինքնակար հետեւանքներ կրնայ ունենալ հասակէն տկարացեալ հօրդ վերայ։— Սպասէ՛ գոնէ։*

ՅՈՎՍԷՓ. *Ի՞նչպէս զսպեմ սրտիս բոցեռանդն տենչանքը. բայց դու, աղէ՛, դարձի՛ր ի Մեմփիս...*

ՈՒԴՈԲԱԼ. *Ձի մոռնաս, Տէր, որ արեւը ծագելուն պէս յաղթանակը քեզի կը սպասէ։ Ամեն բան արդէն կազմ և պատրաստ է. ժողովուրդը՝ իր բարերարին դէմքը անհամբեր է տեսնալու։*

ՅՈՎՍԷՓ. *Ո՜րչափ տաղտուկ են ինձ այսօր այս պատիւները... հաճոյք մը միայն կրնայ հիմայ զգալ հոգիս, այն է Իսրայէլի գիրկը դիմել... Բայց սուղ է ժամանակը, ե՛րթ և արեւուն առջի ճառագայթներուն հետ վերադարձիր (մեկնի Ուղոբալ)։*

ՏԵՍԻԼ Բ.

ՅՈՎՍԷՓ (*առանձին*)

Պիտի տեսնե՞մ ուրեմն այն պատկառելի ծերունին որ իմ ամենէն գոլտոր հասակէս զիս այնչափ կը սիրէր... Ո՜վ Յակոբ, սիրեցեալ որդւոյդ ծոցը պիտի հանդչի՛ ալեզարդ գլուխդ... Ի՞նչպէս պիտի հանդուրժեմ գորովդ... և սակայն պէտք է։ Ի՞նչ կը տեսնեմ... այս մթութեան մէջ չողչողացող ոսկեճամուկ կտաւը... Այո՛, այս է Յակոբայ բնակարանը... մտնանք... ձայն տանք... բայց ո՛չ... քունը խոովել չըլլար...

ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՅՆ ԵՒ ՍԻՄԷՈՎՆ

ՍԻՄՈՆ. Խաղաղ և անդորր կը քնանան բոլոր որդիք Իսրայելի... ես միայն արթուն կամ, ու ճակտիս վերայ սպառնալից կը կենայ Հզօրին աչը։

ՅՈՎՍԷՓ. Խնդրեմ իրմէ եղբարցս թողութիւնը։

ՍԻՄՈՆ. Կը վախնամ մարդկանց հանդիպել... կարծեմ թէ դիս միշտ կը կշտամբեն ոճրագործութեանս համար, իմ մահանամբոյր գաղտնիքս չրթանցս վերայ է միշտ...

ՅՈՎՍԷՓ. Սիմէ՛ոն... ամենէն աւելի քեզի կը կարեկցիմ։

ՍԻՄՈՆ. Սիմէո՛ն... ո՛վ անունս կուտայ...

ՅՈՎՍԷՓ. Ի զո՛ւր փախչիլ կ'ուզես քու անձէդ... խիղճը սրտիդ մէջն է...

ՍԻՄՈՆ. Այո՛, խղճի խայթը դիս կը տանջէ։

ՅՈՎՍԷՓ. Յովսէփը միշտ աչքիդ առջեւն է և ի յուսահատութիւն կը կրթէ քու հոգիդ։

ՍԻՄՈՆ. (Յառաջ գալով դէպ ի ձախ) Ո՛վ ոք և իցես, որ վրիժապարտից սրտին մէջ կը կարդաս, մի՛, մի՛ յայտներ իմ ոճիրս...

ՅՈՎՍԷՓ. Եւ ո՞վ է հոս...

ՍԻՄՈՆ. Ո՞չ ապաքէն Սիմէոնին անունը տուիր... մտաց խղճին վերայ չի խօսեցա՞ր...

ՅՈՎՍԷՓ. (Ճանչնալով զՍիմ.) Դո՞ւ ես ուրեմն, թշուա՛ռ։

ՍԻՄՈՆ. Կը պաղատիմ քեզմէ, քանզի թափանցեցիր սրտիս գաղտնիքը, մ'ըսեր մէկուն... բնութիւնը կը սոսկայ ինծմէ...

ՅՈՎՍԷՓ. Վատաբա՛ղդ Սիմէոն։

ՍԻՄՈՆ. Մ'ըսեր մանաւանդ հօրս... կը մեռնի ցաւէն...

ՅՈՎՍԷՓ. Ես քու թշնամիդ չեմ։

ՍԻՄՈՆ. Աստուծոյ որդի մը ըլլալու ես դուն, որովհետև դուշակեցիր այն ոճիրը՝ որ տասնուհինգ տարիէ ի վեր հոգիս կը տանջէ։

ՅՈՎՍԷՓ. Կը կարեկցիմ քու աղէտիցդ և կուլամ...

ՍԻՄՈՆ. Ես չեմ լար... Աստուած ցամքեցուց աչքերս. սիրտս հրակէզ է։

ՅՈՎՍԷՓ. Ո՞րչափ կը ցաւիմ վրադ, Սիմէոն։

ՍԻՄՈՆ. Անունս մի՛ տար. հոս առաքինազարդ հայրս կը հանդչի, իր մնարիցը առջև կը քնանայ Բենիամին, իմ յանցաւոր անուամբս քուներնին մի՛ պղտորեր։

ՅՈՎՍԷՓ. Ի՞նչ... չե՞ս համարձակիր հօրդ երեւնալ։

ՍԻՄՈՆ. Ո՛չ. իր ներկայութիւնը կսկիծս կը զայրացնէ... Գիշերը միայն երբ կը քնանայ, կուգամ իր կերպարանքը նկատել, և օրը հազիւ կը ծագի՝ վայրենի գազանաց նման անտառները կը թափառիմ։

ՅՈՎՍԷՓ. Բայց թերևս իր խօսքերը քեզ մխիթարեն։

ՍԻՄՈՆ. Այլ եթէ Յովսեփայ վերայ խօսք բանայ...

ՅՈՎՍԷՓ. Յովսեփա՛յ...

ՍԻՄՈՆ. Այո՛, իմ Յովսէփ եղբօրս, զոր ատելութեանս զոհեցի։

ՅՈՎՍԷՓ. Ուրեմն ժամանա՞կն ալ չամոքեց ցաւերդ...

ՍԻՄՈՆ. Հոս է մանաւանդ որ կը տանջիմ, այս տեղս Յովսէփի իմ աչացս առջեւն է միշտ. արթուն յիշողութիւնս կենացս իւրաքանչիւր վայրկեանը կը թուեցնէ, կը տեսնեմ այն գեղեցիկ պատանին՝ հօրը սէրն ու պարծանքը, կը տեսնեմ զինքը խաչինքը արածել Սիւքեմայ դալարագեղ մարմանդները. ա՛յն տեղն ալ կը տեսնեմ, որ երեք արմաւենեաց մօտ կ'աղօթէր և ես վրան յարձակեցայ. կը լսեմ իր անմեղ ձիչերը որ կը գոչէ... Հա՛յր իմ, ազատէ՛ զիս (դէպ ի վրանը)։ Յիմա՛ր... եթէ լսէ՛ զիս. խաղաղութիւ՛ն, խաղաղութի՛ւն... Յաւկոբ դեռ կը հանգչի...

ՅՈՎՍԷՓ. Զուարակա՛ն... դառն է քու վիճակդ... բայց զղջացեալ սրտի մը՝ Յովսէփի անչուչտ կը ներէ։ Այո՛, „երկինք անյապաղ... մի՛ հեռանար քովէս, Սիմէոն... բարեկամի մը ձայնը թերեւս վշտերդ ամոքէ...

ՍԻՄՈՆ. Քու ձայնդ սրտիս խորերը կ'ազդէ... քիչ մը սիրտս կը խաղաղի... այս վայրկենիս նուազ դժբաղդ եմ... Աստուա՛ծ իմ, ո՛հ, թէ որ կարենայի լալ. (ձայն հեռաւոր նուագաց) բայց օրը չուշանար ծագելու. հիմա եղբարքս ջերմ մաղթանօք Յաւիտենականը կը փառաբանեն. ես ու տեղերէս հեռանալու եմ. (օրը կը ծագի թատրոնին խորը)։

ՅՈՎՍԷՓ. Եւ ինչո՞ւ անոնց նուագացը չես ձայնակցիր։

ՍԻՄՈՆ. Ո՛չ, յանցաւոր է այս սիրտս... Աստուած կը մերժէ ուխտերս՝ ինչպէս կայենին զոհը. (ղոյս զվրանաւ Յակոբայ)։ Այլ, ի՞նչ կը տեսնեմ. ազօտ լոյս մը արդէն աչացս առջև կը նկարի... Ո՛վ երկինք... այս ծիրանեփայլ պատմուճանը, այս մեծավայելուչ կերպարանքը... ո՛չ, չեմ խաբուիր, Իսրայելի բարերարն է.

դո՛ւ, Տէ՛ր, որ եղեռս կը ճանչնաս, ասոր համար ընտանեացս դէմ մի՛ զայրանար... իմ յանցանացս բեռը անոնց վերայ չծանրանայ... գթութիւնդ կը հայցեմ թշուառ հօրս վերայ... ներէ՛ եղբարցս և թո՛ղ ինձ փախչիլ... ո՛ւր ալ երթամ՝ Յաւիտենականը կը հանի ետեւէս... անապատաց խորն ալ, իր անողոք արդարութիւնը ինձի կը սպասէ (մեկնի շտապաւ)։

ՏԵՍԻԼ Դ.

ՅՈՎՍԷՓ (առանձին)

Կեցի՛ր Սիմոն... բայց ինքն ինձի չի լսեր. իմ խնամքներովս նորէն խաղաղութիւնը անչուչտ պիտի գտնայ։ Արդէն արեգակը... (ի ներքուս օրհներգութիւնի կուսանաց). Աստուծոյն խանդաղակաթ նուագը կը լսուին. ո՛հ, ի՞նչ քաղցր յիշատակներ մտացս մէջ կը զարթուցանեն (դարձեալ նուագք). երանաւէ՛ր աւուրք մանկութեան... իմ ձայնս ալ ան ատեն եղբարցս ձայնին կը միանար (մերձեւան նուագաց ձայնք)։

ՏԵՍԻԼ Ե.

ՅՈՎՍԷՓ ԵՒ ԲԵՆԻԱՄԻՆ

ԲԵՆԻԱՄԻՆ. (վրանէն եղելով) Այս ինձի անծանօթ տեղերը եղբարցս օրհներգութեամբքը կը թնդան...

Հայրս դեռ կը հանգչի... քնացի՛ր խաղաղութեամբ, Իսրայէ՛լ, ասպնջական երկրի մը մէջն ես։

ՅՈՎՍԷՓ. Այս է ուրեմն Բենիամին, այն մատաղ տղան զոր այնչափ անգամ գրկացս մէջ կը փայփայէի, և որուն չրթունքը հազիւ անուշս կը թոթովէին...

ԲԵՆԻԱՄԻՆ. (վրանը դիտելով) Ի՜նչ ճոխութիւն... շլացեալ աչքերս հազիւ կրնան հանդուրժել այսչափ չքեղութեանց...

ՅՈՎՍԷՓ. Անմեղութիւնը կը ժպտի ճակտին վրայ, իր գեղադիտակ կերպարանացը վրայ կը ճանչնամ զՀռաքէլ՝ հօրս սիրեցեալը և մեր երկուքին մայրը։

ԲԵՆԻԱՄԻՆ. Եւ ո՞վ է այն բարերար մարդը որ այսչափ մեծափարթամ ճոխութեամբ Յակոբայ որդիքը կ'ընդունի։.. (տեսնելով զՅովսէփ.) Այլ ո՛վ զարմանք... ո՛վ ուրեմն...

ՅՈՎՍԷՓ. Հանդարտէ՛ Բենիամին.

ԲԵՆԻԱՄԻՆ. Օտարակա՛ն, անուշս գիտես դուն և սակայն ես զքեզ չեմ ճանչնար։ Ոսկեճամուկ պատմուճանդ ինծի կը յայտնէ որ Մեմփիսի բնակիչներէն ես։

ՅՈՎՍԷՓ. Երկար ժամանակ է որ հոս կը բնակիմ. բայց սիրելի են սրտիս Քանանու բնակիչք։

ԲԵՆԻԱՄԻՆ. Ուրեմն կը ճանչնա՞ս այն հռչակաւոր իշխանը որ այնչափ սիրով զմեզ կը հիւրընկալէ։

ՅՈՎՍԷՓ. Այո՛, Բենիամին, կը ճանչնամ։

ԲԵՆԻԱՄԻՆ. Ըսէ՛ իրեն թէ ո՛րչափ ամենքս ալ զինքը կը սիրենք. ըսէ թէ հայրս կ'օրհնէ իր անունը, և թէ երբոր վերադառնանք մեր հայրենիքը...

ՅՈՎՍԷՓ. Հայրենի՞քդ, Բենիամին...

ԲԵՆԻԱՄԻՆ. Այո՛, այն բարեբաստիկ երկիրը՝ զոր Աստուած մեր հարցը տուաւ։

ՅՈՎՍԷՓ. Կը բաղձա՞ս տեսնել նորէն Քեբրոնի մարմանդները։

ԲԵՆԻԱՄԻՆ. Հոն են իմ խանձարուրքս։

ՅՈՎՍԷՓ. Իմ քովս ալ չե՞ս մոռնար զանոնք։

ԲԵՆԻԱՄԻՆ. Երբե՛ք. մեր հարց ոսկերոտիքը և Աստուծոյ սեղանը հոն ձգեցինք։

ՅՈՎՍԷՓ. (գրկելով) Սիրեցեալ՛դ իմ Բենիամին։

ԲԵՆԻԱՄԻՆ. Կը գրկե՞ս զիս. և ի՞նչ է քու գորովանացդ պատճառը։

ՅՈՎՍԷՓ. Մանկութիւնդ ու անմեղութիւնդ... ո՛րչափ արդեօք կը սիրէ զքեզ հայրդ։

ԲԵՆԻԱՄԻՆ. Իր սրտին մէջ զՅովսէփ փոխանակեցի։

ՅՈՎՍԷՓ. ԶՅովսէ՞փ։

ԲԵՆԻԱՄԻՆ. Այո՛. սիրեցեալ եղբայր մը զոր կորսնցուցինք. շատ մատաղ էի այն ատեն և չէի հասկընար այնչափ հեծկլտանաց և յուզմանց պատճառը. բայց հօրս արտասուքը տեսնելով, ես ալ կուլայի։

ՅՈՎՍԷՓ. Ո՞վ գողտր լեզու անմեղութեան։

ԲԵՆԻԱՄԻՆ. Ո՜հ, երբ անագորոյն մահը այս սիրեցեալ որդին մեզմէ յափշտակեց, ցաւոց մէջ Յակոբ կը մաշէր, և իր վշտահար հոգին մխիթարելու համար զիս իր ծոցը տարին, և հայրս վերստին գտնել կարծեց զՅովսէփ։ Իրեն կ'ուզեկցէի ամեն տեղ, և զինքը կը սփոփէի անուշ խօսքերով և իր ծերութեանը նեցուկ ըլլալով. կ'ըսէին մեր տունը որ անկեղծ էր Յովսէփ և ջերմեռանդն, ես ալ հօրս սէրը գրաւելու համար իրեն նմանող ըլլալ կը ջանայի...

ՅՈՎՍԷՓ. (գրկե զԲեն. զմայլմ.) Սիրեցեա՛լդ իմ Բենիամին, երկայն օրեր ապրէ՛ այսպիսի բարեսիրտ հօր

մը գրկակը մէջ. դո՛ւ միայն կրնաս կորուսեալ Յովսեփայ տեղը բռնել...

ԲԵՆԻԱՄԻՆ. Ձեմ յուսար երբեք։ Բայց արդէն եղբարքս արթընցեր են, արեւը կը ծագի և Յակոբ դեռ կը քնանայ։

ՅՈՎՍԷՓ. Առանց քունը ընդմիջելու, Բենիամին, կրնա՞մ արդեօք նկատել իմ... քու հօրդ վեհ կերպարանքը։

ԲԵՆԻԱՄԻՆ. Ո՛հ, բան մը չեմ կրնար գլանալ քեզի... բայց զգուշանանք որ չարթընայ (վրանը կը բացուի. Յակոբ ճոխ բարձից վրայ ննացած)։

ՅՈՎՍԷՓ. Ահա՛ այն աստուածարեալ ծերունին, վերջապէս կարօտ աչքերս զինքը վերստին կը տեսնեն... տարիքը իր վայելուչ կերպարանքը չէ եղծած. իր ճակտէն առաքինութիւն կը ճառագայթէ... Ո՛հ, անոր տեսքը ինչպիսի՛ զմայլմամբ հոգիս կը լեցընէ։

ԲԵՆԻԱՄԻՆ. Ինչո՞ւ այլայլեր ես, Տէր իմ։

ՅՈՎՍԷՓ. Բենիամին... սիրտս... բայց կը քնանայ։ Պէտք է հնազանդիմ սրտիս զգացմանցը. այս վեհ ճակտին առջև, ի ծունր խոնարհինք և սիրահոս արտասուօք ողողենք այս մեծարելի ձեռքերը (ծնրադրութեամբ լայ)։

ԲԵՆԻԱՄԻՆ. Օտարակա՛ն, որդիական գութն անգամ ասկէ աւելի պատկառանք կամ սէր կրնա՞յ ազդել։

ՅՈՎՍԷՓ. Բենիամին, ո՞չ ապաքէն ամէն բարի մարդկանց հայրն է սա։

ԲԵՆԻԱՄԻՆ. Իրաւ է. (հեռաւոր ձայն ծնծղայից եւ պատերազմական նուագաց) ի՞նչ պատերազմական աղմուկներ կը լսեմ։

ՅՈՎՍԷՓ. (մեկուսի) Աւա՜ղ. ժողովուրդը յաղթանակս տեսնելու անհամբեր՝ ի Մեմփիս կը հրաւիրէ զիս։ Անագորո՛ն պատիւ... և ի՞նչպէս թողում հայրս...

ՏԵՍԻԼ Զ.

ՅԱԿՈԲ ԵՒ ԱՌԱՋԻՆՔ

ԲԵՆԻԱՄԻՆ. Հեռաւոր նուագաց ձայնը հայրս կը զարթուցանէ։

ՅՈՎՍԷՓ. (մեկուսի) Քաղցր վայրկեան... (կ'արթընայ Յակոբ) ի՜նչ անպատում զմայլմամբ հոգիս կը զեղու։

ԲԵՆԻԱՄԻՆ. Իսպառ լուսէն զուրկ են իր աչքերը, օտարակա՛ն. ինքն զքեզ պիտի չկարենայ տեսնել։

ՅՈՎՍԷՓ (մեկուսի). Ո՜վ հայր իմ, ինչո՞ւ չի կրնար որդիդ իր գրկացը մէջ զքեզ ամփոփել...

ԲԵՆԻԱՄԻՆ. Իր դողդոջուն քայլերուն առաջնորդը Բենիամին է։

ՅԱԿՈԲ. (արթընցեալով) Լսէ՛ իմ աղօթքս, Աստուած Աբրահամու. գերեզմանին դուռն հասած, անդարձ հրամանդ իմ հարցս երկրէն զիս կը հեռացնէ։ Հզօր ու ամենակալ, եթէ կ'արդիլես որ իմ ոսկերքս հօրս ոսկերացը հետ հանդչին՝ նոյն չիրմին մէջ, իմ աղետիցս մէջն ալ կը պաշտեմ քու վճիռներդ. կը մեռնիմ եթէ հարկ է՝ պանդխտութեան երկրին մէջ... բայց որդիքս գոնէ երջանիկ ըլլան։

ՅՈՎՍԷՓ. Իր վերջին մտածութիւնն ալ որդիքն են։

ՅԱԿՈԲ. Բենիամին, անցա՞ւ արդեօք աղօթից ժամը... չեմ լսեր եղբարցդ աղօթքի ձայնը։

ԲԵՆԻԱՄԻՆ. Արեգակն արդէն հորիզոնին վրայ կը ծածանի. նուագները դադրեցան։

ՅԱԿՈԲ. Ո՛վ իմս Բենիամին... ի՞նչ տեսիլք խրկեց ինծի Տէրը. անչուշտ ամոքել ուզեց ցաւոցս դառնութիւնը... լսէ՛ այս ահարկու, այլ և ախորժ երաշը...

ԲԵՆԻԱՄԻՆ. Մտիկ կ'ընեմ, հա՛յր։

ՅԱԿՈԲ. Քանանացւոց երկիրը Նեղոսի ափունքներէն զատող անապատին մէջէն կ'անցնէի. տղաքս չորս կողմս էին, և ըստ իմ սովորութեանս վրադ կը կոթընէի։

ԲԵՆԻԱՄԻՆ. Ես ալ անչուշտ կը ջանայի նուազ տարժանելի ընել քեզի համբան։

ՅԱԿՈԲ. Այո՛, որդեակ իմ։ Յանկարծ անապատաց դառնաշունչ հովերը կը սկսին չնչել, և օդոց մէջ աւազակոյտ ամպեր կը դիզուին. ծառայիցս և ուղտերուս նման՝ ես ալ գլուխս կը ծածկէի, մանուընէ խորշելու համար։ Մրրիկը կը ցնդի, անամպ երկնից մէջ արեւը կը շողայ, քրանաթոր ճակատս վեր կը վերցնեմ. այլ աւա՜ղ, առանձին կը գտնամ ինքզինքս հրատոչոր և ամայի դաշտի մը մէջ, որուն ծայրերը հորիզոնին հետ կը խառնուէին։ Բոլոր որդիքս զիս ձգեր էին։

ԲԵՆԻԱՄԻՆ. Ե՛ս ալ, հա՛յր իմ, ո՜հ, ո՛չ. կը խաբուիս. քովդ էի ես։

ՅԱԿՈԲ. Ո՛չ, որդեակ, մինակ էի։

ԲԵՆԻԱՄԻՆ. Ես թողո՞ւմ զքեզ... ուրեմն եղբարքս զիս առեր տարեր էին։

ՅՈՎՍԷՓ. (մեկուսի) Ի՜նչպիսի ոճիր մը մտացս մէջ կը զարթուցանէ այս տղան։

ՅԱԿՈԲ. Միայնակ էի, հրակէզ ծարաւով մը չրթունքս կը պապակէին, ուժս կը նուազէր և մահուան երդեր կ'ուղղէի առ Տէր... որդւոցս համար կ'աղօթէի...

ԲԵՆԻԱՄԻՆ. Որդո՞ց...

ՅԱԿՈԲ. Եւ ահա՛ յանկարծ ձայնդ լսեցի։

ԲԵՆԻԱՄԻՆ. Ես ալ անչուշտ ծոցդ դիմեցի։

ՅԱԿՈԲ. Օտարականի մը ձեռքէ բռներ էիր դուն. ինքն ինծի արմաւ մը ընծայեց. այս վեհազն ու գեղեցիկ օտարականը դէպ ինծի ծռեցաւ, աչքերս ի լոյս բացուեցան... և ճանչցայ զՅովսէփ...

ՅՈՎՍԷՓ. (մեկուսի) Ո՛վ հայր իմ։

ԲԵՆԻԱՄԻՆ. Ի՜նչ. ա՞յն Յովսէփը որ ա՛լ չկայ։

ՅԱԿՈԲ. Ողջագուրեցի զինքը սրտիս վերայ... իմ զաւակս, իմ սիրելի զաւակս կը կոչէի զինքը. ո՛չ. կենացս մէջ աւելի երջանիկ վայրկեան մը չեմ ունեցած։ Որդեակ իմ Յովսէփ... իմ սիրեցեալ Յովսէփս... ո՛վ իմ սրտիս անուշ զաւակը, ծերութիւնս ինծի մոռնալ չի տուաւ զքեզ...

ՅՈՎՍԷՓ. (մեկուսի) Ո՛վ սրտառուչ տեսիլ... և սակայն իր առջևն է Յովսէփ։

ԲԵՆԻԱՄԻՆ. Ալ մի՛ լար, հայր իմ, ցաւերդ ամոքէ՛։

ՅԱԿՈԲ. Արթուն ըլլամ կամ քնանամ, զինքը միշտ կը կարծեմ տեսնել. ի՜նչ քաղցր ձայն որ լսեմ, կը յիշեմ իր քնքուշ ձայնը։

ԲԵՆԻԱՄԻՆ. Ո՛վ անմխիթար կսկիծ։

ՅԱԿՈԲ. Երբոր տեսնեմ մայր մը որ ծոցին մէջ սիրեցեալ որդի մը կը գգուէ, զքեզ կը յիշեմ ան ատենն ալ, ո՛վ իմս Յովսէփ... և սակայն դու՝ իմ ծերութեանս յոյսը, դու ես հիմայ անդարման չարեացս աղբիւրը։

ՅՈՎՍԷՓ. Ա՛լ չեմ դիմանար... չեմ կրնար դպել սրտիս յուզմունքը. (ծունկը կը նետուի)։

ԲԵՆԻԱՄԻՆ. Ի՞նչ կը տեսնեմ...

ՅՈՎՍԷՓ. (գրկե զձեռս հօրն, մեկուսի) Ո՛վ հայր իմ, հայր։

ՅԱԿՈԲ. Ո՛վ կը համբուրէ ձեռքս... ո՞վ կ'ողողէ զայն արտասուօք։

ՏԵՍԻԼ Է.

ՆՈՅՆՔ ԵՒ ՈՒԴՈԲԱԼ

ՈՒԴՈԲԱԼ. Անպատում բերկրութեամբ լեցուած՝ ժողովուրդը կը սպասէ, ո՛վ Տէր, տեսնել իր աղատարարը յաղթական կառաց վրայ. դէմ մի՛ կենար իր սիրոյն. խնդութեան աղաղակներով կը կոչեն զԿլէոփաս։

ԲԵՆԻԱՄԻՆ.
ՅԱԿՈԲ. } Կլէոփա՛ս։

ՅԱԿՈԲ. Ո՛ւր է ուրեմն Կլէոփաս։

ԲԵՆԻԱՄԻՆ. Ինքն է որ դողդոջուն ձեռքերդ արտասուօք կ'ողողէր։

ՅԱԿՈԲ. Ի՞նչ կը լսեմ... ո՛վ հիասքանչ ազնուութիւն... Տէ՛ր իմ, շնորհապարտ ոգւով ծնգացդ կը փարիմ...

ՅՈՎՍԷՓ. Ծնգա՛ցս... ո՛հ. ո՛չ... այլ սրտիս... (խուռն բազմութիւն Հրէից եւ Եգիպտացւոց)։

ՈՒԴՈԲԱԼ. Ահա՛ քաղաքացւոց խումբը յառաջ կուգայ, Տէր՝։

ՅՈՎՍԷՓ. (Յակոբայ եւ Բենիամինի ձեռքեն բռնելով) Եկէ՛ք, եկէ՛ք երկուքնիդ ալ, ես ձեզի պիտի առաջնորդեմ. հաղո՛րդ եղէք փառացս՝ զոր երախտապարտ ժողովուրդ մը ինծի կը պատրաստէ. եթէ իմ յաղթական կառացս վերայ բազմին ինծի հետ Յակոբ և Բենիամին, Մեմփիս թո՛ղ իմանայ թէ ո՞րչափ կը մեծարեմ առաքինութիւնն ու անմեղութիւնը։

ՊԱՐ. Սորվեցէ՛ք, երկրի՛ս աշխարհակալք, թէ ի՞նչ է ճշմարիտ փառքը։ Պատերազմաց արիւնռուչտ ոգին չզիներ իր բազուկը. իր յաղթանակը աւերակաց վերայ չէ՛, այլ երջանկացեալ մարդկանց մէջ՝ որոնք կենօք չափ իրեն երախտապարտ են։

(Ի խորս թատեր, կանայք եւ մանկտի եւ խումբ զօրականաց ծաղկանք եւ խնկոք.— յաղթական կառք, ուր բազմին Յակոբ եւ Յովսէփ, առ ոտս նոցա Բենիամին)։

ԶԳԻ ՎԱՐԱԳՈՅՐՆ

ԱՐԱՐՈՒԱԾ Գ.

Ապարանք Յովսեփու, մէկ կողմը սեղան: Յակովբ իր որդւովքը սեղանին շուրջը. հակառակ կողմը այն ատենուան երաժիշտք կը նուագեն. առջեւէն գերիներ, ոսկի ամաններ կը լեցընեն, եւայլն:

ՏԵՍԻԼ Ա.

ՅՈՎՍԷՓ, ՅԱԿՈԲ, ՈՐԴԻՔ ՅԱԿՈԲԱՅ *(բաց ի Սիմէոնէն)*

ՅԱԿՈԲ. *Ո՛վ օր երիցս երջանիկ, ի՞նչ խաղաղութիւն, ո՛վ Տէր. միթէ այսչափ պատուոյ արժանի՞ էին աննչան հովիւք։*

ՅՈՎՍԷՓ. *Պիտի գիտնաս քիչ ատենէն այսչափ յարգանաց պատճառը։*

ՅԱԿՈԲ. *Արժանի կը սեպես քովս նստիլ, և իմ որդիքս չորս կողմս խմբել։*

ԲԵՆԻԱՄԻՆ. *Բաց ի Սիմէոնէն, հա՛յր իմ։*

ՅԱԿՈԲ. *Ի՞նչ. դեռ ինծմէ կը փախչի՞ Սիմէոն. բաւական չէ՞ր Յովսէփը կորսնցնելս։*

ՌՈՒԲԷՆ. *Յովսէփը... պէ՞տք է ուրեմն հանդիսից մէջ, այսպիսի հզօր և վեհանձն իշխանի մը առջև յիշատակել ողբա՛լ Յովսեփայ վրայ։*

ՅԱԿՈԲ. *Ո՛վ իմ անդրանիկս, իրրև տարապայման կը կշտամբես ցաւերս... չե՞ս յիշեր, Ռուբէն, այն օրը յորում իր մահը ինծի գուժեցիր... արցունքներ կը սահէին աչքէդ...։ Դուք եղբայր էք միայն. կրնաք զինքն մոռնալ... բայց հայր մը միշտ արցունքնե՛ր ունի իր կորուսեա՛լ որդւոյն համար. (Յովսեփի գրկէ զաջ Յակոբու). Դո՞ւ ես, Բենիամին, որ ձեռքս կը սեղմես խանդաղատանօք։*

ԲԵՆԻԱՄԻՆ. *Ո՛չ, հայր իմ, բարերար իշխանն է։*

ՅԱԿՈԲ. *Ներէ, Տէ՛ր, որդւոցս ձեռքը կարծեցի։*

ՅՈՎՍԷՓ. *Հոգ մ՚ըներ ալ Սիմէոնին վրայօք, Յակոբ. զինքը փնտռելու մարդ խրկեցի, անյապաղ հոս կուգայ։ Գերիներ, հեռացէ՛ք (մեկնին երաժիշտք եւ ստրուկք)։ Հիմայ թո՛ղ քաղցրանաւաղ օրհնութիւններ երգենք ի պատիւ հզոր Ամենակալին և բարձրելոյն...*

ՅԱԿՈԲ. *Ի՞նչ կը լսեմ, ո՛վ Տէր. միթէ մեր օրինաց կը հնազանդի՞ս դու ալ։*

ՏԵՍԻԼ Բ.

ՆՈՅՆՔ ԵՒ ՈՒԴՈՐԱԼ

ՈՒԴՈՐԱԼ. *Մի՛ սկսիր նուագները, Տէ՛ր իմ. ի զուր Փարաւոն կը մեծարէ զքեզ, և ի զուր քեզի երախտապարտ կը դաւանի ինքզինքը Եգիպտոս։ Քու փառացդ ու առաքինութեանդ նախանձոտ ինչնամիք կը համարձակին ամբաստանել զքեզ։*

ՅՈՎՍԷՓ. Եւ ո՞րն է յանցանքս։

ՈՒԴՈՐԱԼ. Առանց հրամանի օտար ժողովուրդ մը հիւրնկալելդ, Եգիպտացւոց սահմանեալ նպաստները անոնց բաշխելդ, և քեզի միայն սեփհական պատիւներու մասնակից ընել անձանօթ հովիւ մը։

ՅԱԿՈԲ. Վեհանձն մարդ, արդեօք աղետիցդ պատճա՞ռ պիտի ըլլանք։

ՅՈՎՍԷՓ. Անհոգ եղի՛ր, ծերո՛ւնի։

ՈՒԴՈՐԱԼ. Արդէն անարգ գրանիկներ հեռ և երկպառակութիւն կը ցանեն այս երկու ժողովրդոց մէջ. այս օտարականաց չատը, արդէն նախատակոծ...

ՅՈՎՍԷՓ. Նախատե՛լ Քանանու ժողովուրդը... դողան յանցաւորք... Բայց փութանք յոտս Փարաւոնի. աս մեծ թագաւորը Կ'անսայ հմարտութեան... Ակներև պիտի տեսնուի Աստուծոյ արդարութիւնը և թշնամիներս ամօթապարտ պիտի կործանին։ Դուք, որդի՛ք Յակոբու, ձեր ծառաներովը իմ պալատս գացէք. ե՛ս եմ ձեր կենացը պատասխանատուն։ Իսկ դուք, Եգի՛պտացիք, կ'երդնում յանուն Աստուծոյն ոչ ձեր ապագայ թշուառութիւնները ինձի յայտնեց, ո՛վ որ ամբարիշտ ձեռք մը վերցնէ Իսրայէլի որդւոցը վերայ՝ մահապարտ է։ Թիկնապահ՛ք, պաշտպանեցէք այս օտարները՝ ուղեկցելով անոնց։ Բենիամին, հօրդ քով կեցի՛ր դուն (մեկնին Յովսէփ եւ Ուդորալ. ասի եւ անցի որդիք եւ թիկնապահք)։

ՏԵՍԻԼ Գ.

ՅԱԿՈԲ ԵՒ ԲԵՆԻԱՄԻՆ

ՅԱԿՈԲ. Բարեբա՛ր մարդ... երկնից օրհնութիւնը...

ԲԵՆԻԱՄԻՆ. Ա՛լ ինքը չի լսեր...

ՅԱԿՈԲ. Նուազ հոանդուն չըլլան մեր իղձերը իր բացակայութեան առենն ալ. ճանչցի՛ր թէ ի՛նչ ազդու է երախտագիտութիւնը. երբոր մեր բարերարին ձայնը կը լսեմ, գող մը, սարսուռ մը կը զգամ...

ԲԵՆԻԱՄԻՆ. Ինքն ալ անտարբեր աչքով քեզի չի նայիր. քուն եղած ատենդ մինչդեռ իմ սիրոյս և քու առաքինութեանցդ վերայ կը խօսէի իրեն, դէպ ի քեզ ծռեցաւ և աչքերը արցունքներ հոսեցին։

ՅԱԿՈԲ. Ի՜նչ. այս մեծ մարդը Յակոբայ առջև խոնարհեցա՞ւ։

ԲԵՆԻԱՄԻՆ. Այո՛, հայր իմ. «Բենիամին, ըսաւ ինձի, երկիր պագանելով կը մեծարեմ հօրդ ծերութիւնը»։

ՅԱԿՈԲ. Օրհնեալ ըլլան. իր ծնողքը... օրհնեալ ըլլայ այն հայրը որ զինքը իր որդին կրնայ կոչել...

ԲԵՆԻԱՄԻՆ. Ո՛վ երիցս երջանիկ այն տղան որ զինքը իրեն եղբայր կրնայ կոչել։

ՅԱԿՈԲ. Եւ ո՞ւր առաջնորդեց մեզ, այս մեր ընտանեաց ազատարարը։

ԲԵՆԻԱՄԻՆ. Ոսկեձեղուն արքունեաց մէջ։

ՅԱԿՈԲ. Շատ հարուստ է ուրեմն։

ԲԵՆԻԱՄԻՆ. Միրանեփայլ պատմուճան կը հագնի։

ՅԱԿՈԲ. Զոքս դին թիկնապահք կա՞ն։

ԲԵՆԻԱՄԻՆ. Օր մը բաւական չէ իր գերիները համբելու համար։

ՅԱԿՈԲ. Սիրելի՞ է ժողովրդեան։

ԲԵՆԻԱՄԻՆ. Լսեցիր Եգիպտացւոց խնդագին աղմուկները։

ՅԱԿՈԲ. Սակայն անոր ալ թշնամիները կան։

ԲԵՆԻԱՄԻՆ. Հա՛յր իմ, ինչո՞ւ թշնամիներ կ'ունենայ մարդ, երբոր ինքը ամենուն աղէկութիւններ կ'ընէ։

ՅԱԿՈԲ. Քանզի չարասէր մարդիկ կան։ Կլէոփա՞ս է անունը։

ԲԵՆԻԱՄԻՆ. Այո՛, հայր։

ՅԱԿՈԲ. Այս երկի՞րը ծնած է։

ԲԵՆԻԱՄԻՆ. Չեմ գիտեր։

ՅԱԿՈԲ. Նկարագրէ՛ ինծի իր կերպարանքը։

ԲԵՆԻԱՄԻՆ. Վայելչադէ՞մ է ու բարձրահասակ. իր խարտիշագեղ մազերը խոպոպիքներով ուսոցը վերայ կ'իյնան։

ՅԱԿՈԲ. Ո՜հ, ի՜նչպէս Յովսեփիս կը նմանի, Բենիամին։

ԲԵՆԻԱՄԻՆ. Անուշ է իր նայուածքը և ձայնը...

ՅԱԿՈԲ. Յովսեփայ ձայնը կը կարծէի լսել, երբոր կը խօսէր։

ԲԵՆԻԱՄԻՆ. Երեսուն գարուն դեռ հազիւ տեսած է։

ՅԱԿՈԲ. Յովսէփս անոր հասակակից պիտի ըլլար։

ԲԵՆԻԱՄԻՆ. Ինչո՞ւ անօգուտ յիշատակներով ցաւերդ կը նորոգես։ Ա՛լ Հռաքելայ որդին՝ իմ եղբայրս չիկայ...

ՅԱԿՈԲ. Գիտեմ, գիտեմ որ զաւակս կորսուեցաւ, յանցաւոր եմ զինքը յիշելովս։ Ո՞չ ապաքէն իմ սրտիս մէջ դու անոր տեղը բռնեցիր։ Բենիամին, առանց քեզի մինակ պիտի մնայի։ Եղբարքդ զաւկի տէր են, մոռցան հայրերնին. ո՜հ, գոնէ դու զիս մի՛ ձգեր։

ԲԵՆԻԱՄԻՆ. Երբեք, երբեք, իմ սիրելի հա՛յրս։

ՅԱԿՈԲ. Աչացս լոյսը մթընցաւ և ծերութիւնը

վրաս կը ծանրանայ. բայց դեռ որդի մը ունիմ։ Եկուր ուրեմն որ գրկեմ զքեզ, սիրեցեալ Բենիամին։

ՏԵՍԻԼ Դ.

ՍՊԱՅ, ՅԱԿՈԲ, ՍԻՄԷՈՆ

ՍԻՄՈՆ. Ո՞ւր կը տանիս զիս։

ՍՊԱՅ. Կլէոփաս կը հրամայէ որ հօրդ քով կենաս (մեկնի)։

ՏԵՍԻԼ Ե.

ԲԵՆԻԱՄԻՆ, ՅԱԿՈԲ, ՍԻՄԷՈՆ

ԲԵՆԻԱՄԻՆ. Դո՞ւն ես, Սիմէոն. եկո՛ւր մէկտեղ մխիթարենք հայրերնիս։

ՍԻՄՈՆ. Ե՞ս մխիթարեմ զինքը, Բենիամին։

ԲԵՆԻԱՄԻՆ. Միշտ Յովսեփայ վերայ կը խօսի։

ՍԻՄՈՆ. Յովսեփա՞յ... Աստուած իմ։

ՅԱԿՈԲ. Ինչո՞ւ քովէս կը փախչիս, Սիմէոն։ Եթէ մեծ կսկիծ մը կը հիւծէ հոգիդ, չի յայտնե՞ս հօրդ. իրմէ աւելի կրնա՞յ մէկը զքեզ սփոփել. բա՛ց ինծի սիրտդ, որդեակ, ըսէ՛ ցաւերդ։

ՍԻՄՈՆ. Ո՜հ, երբեք...

ՅԱԿՈԲ. Միթէ դու ալ եղբարցդ պէս պիտի կշտամբե՞ս զիս որ Յովսեփայ վերայ կուլամ. դու ալ հայր ես, Սիմոն. եթէ յանկարծահաս աղէտ մը որդւոցդ մէկէն զքեզ զրկէ, ո՞վ կրնայ մխիթարել զքեզ։

ՍԻՄՈՆ. Սիրտս կը կեղեքես, հա՛յր։

ՅԱԿՈԲ. Եւ սակայն եղբարդ կը կարծեն որ զանոնք կ'արհամարհեմ Յովսեփայ վերայ լալով։ Ապերախտնե՛ր... հոր մը սիրտը չեն ճանչնար։ Տո՛ւր ինձ քու ձեռքդ, Սիմոն. հաւատա՛ ինձ՝ թէ հայր մը ա՛ն դաւակը կը սիրէ աւելի որ միշտ իր քովն է, որ զինքը կը գգուէ և կը մխիթարէ։

ՍԻՄՈՆ. Քու բարեսրտութիւնդ զիս ամօթապարտ կը ձգէ։

ՅԱԿՈԲ. Կը ճանչնամ զքեզ, Սիմէոն. քու եռանդուն հրամաս սիրտդ շատ անգամ զքեզ ինձմէ հեռացուց. արհամարհեցիր դուն եղբարցդ զրօսանքները և ընտանեաց անմեղ հրճուանքները։ Որոց մէջ պատերազմական զրաղմունքներ խնդրեցիր. ախորժակացդ վայրենութիւնը, անտառաց միայնութիւնը, գազանաց հետ կռուիլդ խստացուցին արդեօք սիրտդ. միթէ չարագա՞ր և յանցանք մը գործեցիր... արդեօք արիւն թափեցիր...

ՍԻՄՈՆ. Ո՛չ բնաւ, ո՛չ բնաւ, սուրբ են ձեռքերս մարդկային արենէ... բայց ո՛վ Աստուած...

ԲԵՆԻԱՄԻՆ. Ինչո՞ւ, ո՛վ հայր իմ, այսպիսի կասկածներ կ'ընես Սիմոնին վերայ... ո՞չ ապաքէն Յակոբայ որդին է... կրնա՞յ քու ազգատոհմդ յանցաւոր ըլլալ մարդկանց կամ Աստուծոյ առջև։

ՍԻՄՈՆ. Յակոբայ սերունդը Աստուծմէ պիտի անիծուի։

ԲԵՆԻԱՄԻՆ. Ո հ, ի՞նչ կ'ըսես, եղբա՛յր։

ՍԻՄՈՆ. Ներէ՛... տաղնապս... ցնորքս...

ՅԱԿՈԲ. Ո՛չ, Սիմէոն. Աստուած իր ծառային ըսաւ... «Եգիպտոսի մէջ օրհնես պիտի քու զաւակներդ, անոնցմէ թագաւորներ պիտի ծնանին, և քու որդիքդ ծովու աւազին չափ շատնալով՝ պիտի ծածկեն բոլոր երկիրը»։

ՍԻՄՈՆ. Բայց աս ալ ըսաւ. «Սիմոն, դա՛ւակդ բռնութեան, Յակոբու փառքը պիտի չի վայելէ»։

ՅԱԿՈԲ. Ո՞վ յայտնեց քեզի Աստուծոյ կամքը...

ՍԻՄՈՆ. Ըսաւ նաև. «Յովսեփը պիտի բլլայ բեղմնաւոր ոստը»։

ԲԵՆԻԱՄԻՆ. Կեցի՛ր, եղբայր. ինչո՞ւ Յովսեփայ վերայ կը խօսիս։

ՅԱԿՈԲ. Անգութ, չե՞ս գիտեր որ ալ ինքը չկայ։

ՍԻՄՈՆ. Ո՛վ կսկիծ... ո՛վ տաղնապ...

ՅԱԿՈԲ. Միթէ բոլոր որդիքս իր կորուստը չպրա՞ցի՞ն։

ԲԵՆԻԱՄԻՆ. Ծաղիկ հասակիս մէջ ես ալ վրան լացի։

ՍԻՄՈՆ. Ինքզինքս ա՛լ չեմ կրնար զսպել... Աբրահամու Աստուածը զիս կը հալածէ... Աչքիս առջևն է մահուան հրեշտակը. սպառնալից ձայնով զիս երկնաւոր ատեանը կը հրաւիրէ։

ՅԱԿՈԲ. Ի՞նչ գործեցիր ուրեմն, թշուառ...

ՍԻՄՈՆ. Պիտի անիծես զիս, Յա՛կոբ։

ՅԱԿՈԲ. Զքեզ անիծե՞լ... ո՛վ երկինք։

ՍԻՄՈՆ. Ոճիր մը գործեցի...

ՅԱԿՈԲ. Ոճի՞ր մը... և Յովսեփայ անունն տուիր։

ԲԵՆԻԱՄԻՆ. Ո՛վ չար. արդեօք զի՞նքը սպաննեցիր։

ՍԻՄՈՆ. Ո՛չ, ո՛չ, եթէ արդար է Ամենակալը. դիւ կ'ապրի և պէ՛տք է որ ապրի՝ իր յանցաւոր եղբարքը պատժելու համար։

ԲԵՆԻԱՄԻՆ. Իր յանցաւոր եղբա՞րքը...

ՅԱԿՈԲ. (ցնծութեամբ) Մեռած չէ՞ Յովսեփ... Տասնեւհինգ տարի է որ կուլամ. և դուք իմ դառն արտասուացս դիմացո՞ւ։

ՍԻՄՈՆ. Քո արտասուքդ սրտիս վերայ ինկան և ծովու մը նման ողողեցին զայն։

ՅԱԿՈԲ. Բայց ո՞չ ապաքէն դու գուժեցիր ինծի որ գազան մը լափեց զինքը...

ՍԻՄՈՆ. Խաբեցի զքեզ։

ՅԱԿՈԲ. Ո՞չ ապաքէն եղբարքդ, երբոր քովս դարձան, մոխիր ցանեցին իրենց գլխուն վերայ և աղիողորմ ճիչեր այձակեցին։

ՍԻՄՈՆ. Խաբեցին զքեզ։

ՅԱԿՈԲ. Դու չտեսի՞ր ինծի իր արիւնոտ պատմուճանը և տրտում ձայնով մը ըսիր. «Լա՛ց, հա՛յր իմ, լա՛ց. չար գազան մը լափեց սիրեցեալ որդիդ»։

ՍԻՄՈՆ. Խաբեցի զքեզ։

ՅԱԿՈԲ. Նենգաւո՛րք... ո՞ր աշխարհքը տարիք զինք... ո՞ւր տեղ պիտի կրնամ զինքը դտնել։

ՍԻՄՈՆ. Չեմ գիտեր։

ՅԱԿՈԲ. Որո՞ն էր այն զգեստը զոր ինծի բերիք։

ՍԻՄՈՆ. Յովսեփայ։

ՅԱԿՈԲ. Հապա արի՞ւնը։

ՍԻՄՈՆ. Գառնուկի մը զոր մորթեցի։

ՅԱԿՈԲ. Ո՜վ տարապայման ցաւոցս... ըսէ՛, ըսէ՛ ինձ, ո՞ւր է եղբայրդ։

ՍԻՄՈՆ. (տոկացեալ) Յաւիտենականին ձայնն է որ զկայէն կը հարցաքննէ։

ԲԵՆԻԱՄԻՆ. Ո՞ւր է եղբայրս, ի՞նչ ըրիր։

ՍԻՄՈՆ. Ուզեցի վիրաւորել... բայց Բարձրելոյն աչը փչրեց ձեռքիս մէջ սպառնալից երկաթը... Մի՛ խնդրիր ինձմէ արիւնը... քանզի չհոսեց։

ՅԱԿՈԲ. Ի՞նչ ըրիր զինքը։

ՍԻՄՈՆ. Ծախեցի։

ՅԱԿՈԲ. Ծախեցի՞ր...

ԲԵՆԻԱՄԻՆ. Յովսեփայ արիւնը գերիներու մէջ...

ՍԻՄՈՆ. Հա՛յր իմ...

ՅԱԿՈԲ. Քու հա՛յրդ...

ՍԻՄՈՆ. Ո՛չ. անիծեալ եմ։ Այս ցուրբ անունը շրթունքս կ'այրէ։

ՅԱԿՈԲ. Եղբա՞րքդ ալ յանցաւոր են։

ՍԻՄՈՆ. Ես ամենէն աւելի։

ՅԱԿՈԲ. Նենգաւորք... ո՞վ դրդեց զձեզ այս եղեռնը գործելու...

ՍԻՄՈՆ. Մախանք, նախանձ և ատելութիւն. Յովսեփայ վերայ միայն կը խօսէիր, Յովսէփը միայն կը սիրէիր... և Յովսէփը մեզի պժգալի եղաւ... իր կորուստը վճռեցինք. ո՛հ, եթէ այն օրուընէ ի վեր խղճիս խայթն ու տագնապները տեսնէիր... Աստուծոյ բաղուկը՝ կայենի նման զիս չանթահար ըրաւ... Բարձրեալը ցնորեց միտքս... ցամքեցուց անդամներս. դատապարտութեան կնիքը ճակտիս վերայ դրոշմեց... կոզակցիս, որդւոցս քով ի զուր սփոփանք կը խնդրէի... Եղեռնագործք հանգիստ չունին... Հայրենի տունէն հեռացայ... մահիճս ձգեցի... կը թափառէի մայրեաց մէջ... հեղեղատներու եղերքը կը պառկէի... զՅովսէփ կը խնդրէին աղաղակներս, բայց ձայնս անապատներու մէջ կը կորսուէր։ Հզօրին վրէժխնդրութիւնը զիս կը հալածէ... Յանցաւոր եմ ես ու թշուառ...

ՅԱԿՈԲ. Սիմէո՛ն։

ՍԻՄՈՆ. Զքեզ խանգաղատել չեմ ուզեր. կը ճանչնամ ոճիրս։ Բարձրեալը չի ներեց, իրեն պէս անաւոր եղիր դու ալ. ե՛ս յափշտակեցի սիրեցեալ որդիդ... ե՛ս մերկացուցի զինքը իր պատմուճանէն... ե՛ս վերջա-

պէս... ո՜հ, ես ծախեցի. իմ՝ քոյ, Աբրահամոյ արիւնը... Պատժէ՛ զիս, անիծէ՛ զիս. անիծէ՛ իսպառ Սիմէոնին սերունդն ալ...

ՅԱԿՈԲ. Աստուա՛ծ սրտմտութեան... Բայց ի՞նչ աղմուկ կը լսեմ։

ԲԵՆԻԱՄԻՆ. Եղբարքս են որ կը վերադառնան։

ՅԱԿՈԲ. Մա՜տնիկք...

ՏԱՍԻԼ Զ.

ՅԱԿՈԲ ԵՒ ՈՐԴԻՔՆ

ՌՈՒԲԷՆ. Մեր բաբերարին առատաձեռն խնամքը կրնանք...

ՅԱԿՈԲ. Հեռացէ՛ք, հեռացէ՛ք ձեր հօրմէն։

ՌՈՒԲԷՆ. Ի՞նչ է մեր յանցանքը։

ՆԵՓԹԱՂԻՄ. Ի՞նչ ըրինք։

ՅԱԿՈԲ. Ո՜վ խստացեալ սիրտք. զո՞ւք մոռցաք և ինծի՞ կը հարցունէք...

ՌՈՒԲԷՆ. Ո՜վ Յակոբ...

ՅԱԿՈԲ. Ձակտիս վերայ չէ՞ք կարդար Ամենակալին վճիռը որ զձեզ կը դատապարտէ։

ՌՈՒԲԷՆ. Եղբա՛ր իմ... Սիմէո՛ն։

ՅԱԿՈԲ. Ի՜նչ ըրիք... ի՞նչ... խղճի ձայնը չէ՞ք լսեր սրտերնուդ մէջ՝ որ Յովսէ՛փ կը պոռայ։

ՌՈՒԲԷՆ. Կորսուեցա՛նք...

ԲԵՆԻԱՄԻՆ. (յոտս անկեալ) Ներէ՛, հայր իմ. ձեռնամած կը պաղատի քեզ Բենիամին...

ՅԱԿՈԲ. (զԲենիամին փնտռելով). Զատուէ՛ այս

անօրէններէն, ո՜վ Բենիամին... ի՞նչ գործ ունի անմեղութիւնը յանցանաց մէջ... եկո՛ւր, որդեակ իմ, եկո՛ւր... դու միայն արիւնս ես... դու միայն՝ Իսրայելի արիւնն ես... հեռացի՛ր եղբայրասպաններէդ, որդեա՛կ իմ...

ՆԵՓԹԱՂԻՄ. Դողդոջագին ծնգացդ կը փարիմք, հա՛յր... ներէ՛ մեզի։

ՅԱԿՈԲ. Ի՜նչպէս խանդաղատիմ ձեր արտասուացը... եղբայրնիդ ալ կուլար՝ երբ զինքը ծախեցիք...

ՍԻՄՈՆ. Իմ վրաս թափէ միայն բարկութիւնդ... ե՛ս միայն յանցաւոր եմ։

ՏԵՍԻԼ Է.

ՆՈՅՆՔ ԵՒ ՅՈՎՍԷՓ

ՆԵՓԹԱՂԻՄ. Օգնէ՛ մեզի, հզո՛ր Իշխան, մեր հօրը ցասումն ողոքէ՛...

ՍԻՄՈՆ. Ե՛ս եմ, ե՛ս յանցաւորը...

ՅԱԿՈԲ. Փախէ՛ք, հեռացէ՛ք, եթէ ո՛չ, զամենքդ ալ կ՚անիծեմ։

ՅՈՎՍԷՓ. Կը պաղատիմ քեզի, Յակոբ, մի՛ անիծեր զաւակներդ...

ՅԱԿՈԲ. Երբոր ճանչնաս իրենց նենգութի՛ւնը...

ՅՈՎՍԷՓ. Եթէ Աստուած ի գութ կը շարժի զղջման արցունքներէ, մի՞թէ վրէժխնդրութեան ոգւով լցուած կրնա՞յ Յակոբ որդիքը նզովել։

ՅԱԿՈԲ. Ո՜հ, չես գիտեր ի՞նչ կը խնդրես... չե՛ս ճանչնար սատնց ոճիրը...

ԲԵՆԻԱՄԻՆ. Ցանցաւոր են, բայց որդիքդ են։

ՅԱԿՈԲ. Կրնա՞ս հաւատալ... Թշուա՞ռք... իրենց եղբայրը, իմ զաւակս, Յովսէփս ծախեցին...

ՌՈՒԲԷՆ. Ցաւերնիս յանցանքներնէս աւելի է։

ՆԵՓԹԱՂԻՄ. Արեամբս կ'ուզէի գնել զինքը։

ՌՈՒԲԷՆ. Ա՛ս երկրիս մէջն է անշուշտ... Ներեցէ՛ք որ...

ՆԵՓԹԱՂԻՄ. Թափառինք Եգիպտոսի մէջ... և երբոր զինքը գտնանք...

ՌՈՒԲԷՆ. Աղջիկը ի ծունր կ'իջնանք...

ՍԻՄՈՆ. Գլուխնիս փոշւոյ մէջ կը թաթախենք...

ՆԵՓԹԱՂԻՄ. Կը փչրենք իր երկաթները...

ՍԻՄՈՆ. Իր շղթաները ե՛ս կ'ուզեմ կրել։

ՆԵՓԹԱՂԻՄ. Ամենքնիս ալ գերի կ'ըլլանք զինքը ազատելու համար (եղեղու վրայ կ'ընկնի)։

ՅՈՎՍԷՓ. Որդիք Յակորու, կեցէ՛ք, սրտերնիդ զըղջացեալ է. եղբայրնիդ կը փնտռէք. կ'ուզէք իր շղթաները կրել. լա՛ւ ուրեմն, պիտի գտնէք զինքը։

ՍԻՄՈՆ. Ինչպիսի՞ յոյս կուտաք մեզի, Տէ՛ր։

ՅԱԿՈԲ. Որդիս պիտի գտնա՞մ...

ՍԻՄՈՆ. Ո՛րչափ պիտի ատէ զմեզ։

ՅՈՎՍԷՓ. Դեռ զձեզ կը սիրէ...

ՍԻՄՈՆ. Սոսկալով պիտի տեսնայ զմեզ։

ՅՈՎՍԷՓ. Ձեզի ներեց արդէն։

ՅԱԿՈԲ. Ո՛վ Տէր, նպաստէ՛ եռանդեանս... առաջնորդէ զողդոջուն քայլերուս. որդիս գտնա՞մ։

ՅՈՎՍԷՓ. Հանդարտէ՛, պատկառելի ծերունի։

ՅԱԿՈԲ. Ըսէ՛ ինծի, ըսէ՛, ի՞նչ եղաւ։

ՅՈՎՍԷՓ. Փառաց ծայրն հասած է, և հիմայ մարդկանց երջանկագոյնն է։

ՅԱԿՈԲ. Ալ գերի չէ՞ ուրեմն։

ՅՈՎՍԷՓ. Թագաւորին սիրելին է. ժողովուրդը կը խոնարհի՝ իրեն առջև։

ՅԱԿՈԲ. Ո՛վ յուզումն... ի՞նչ այլայլութիւն. ո՛հ, Տէ՛ր, գթա՛ ինծի... որդի՞ս, ո՞ւր է որդիս։

ՅՈՎՍԷՓ. Հա՛յր իմ. ոտքիդ առջևն է. ես եմ Յովսէփ...

ԱՄԵՆՔԸ. (ի ծունր) Յովսէ՛փ...

ՅՈՎՍԷՓ. Այո՛, քու Յովսէփ որդիդ է որ հիմայ քեզմէ իր եղբարցը թողութիւն կը խնդրէ։

ԲԵՆԻԱՄԻՆ. Աստուա՛ծ գթութեան։

ՅՈՎՍԷՓ. (զՍիմոն ոտ հանելեն ու գրկելեն ետը) Ո՛տք ելէք, եղբարք իմ, Յակոբ կը ներէ ձեզի... Հա՛յր իմ, որդւոյդ մէջ ապրէ՛. Փարաւոն իմանալով իմ բարեբաստիկ վիճակս և թշնամեացս նենգութիւնը, Գիւսեմայ երկիրը ձեզի կը շնորհէ. հոն միախումբ Իսրայէլի որդիքը պիտի կարենան իրենց հարցը Աստուածը պաշտել։

ՅԱԿՈԲ. Աստուա՛ծ գթութեան, վերջապէս որդիս կը շնորհես ինծի...

ԲԵՆԻԱՄԻՆ. Գրկեմ զքեզ, եղբա՛յր իմ։

ՍԻՄՈՆ. Ա՛լ ցաւերս դադրեցան... անցան տագնապներս։

ՅՈՎՍԷՓ. Ո՛վ հայր իմ, ինչո՞ւ չես կրնար տեսնել քու որդիդ, որ զքեզ երջանկացնելու յուսով միայն կը սփոփուէր։

ՅԱԿՈԲ. (ի ծունր) Աստուած իմ, դու որ իմ զաւակս շնորհեցիր ինծի, դու որ իմ ցաւերս այս վայրկենիս մէջ փարատելով երջանիկ հայր կ'ընես զիս... ո՛հ, տո՛ւր ինձ, հարցս քով յաւիտեան հանդչելէն առաջ՝ անգամ մ'ալ որդւոյս դէմքը տեսնեմ... (արտեւա-

նունին Երերան). բայց ո՜հ. ի՜նչ ախորժ զգացմունք մը կ'իմանամ... մթութիւնը կը փարատի... լո՜յս. լո՜յս... ո՜հ քաղցր վայրկեան. ո՜հ վերջապէս զձեզ կը տեսնեմ, տղա՛ք...

ՈՐԴԻՐՆ. (զՑակոբ գրկելով) Ո՜վ հայր մեր։

ՑՈՎՍԷՓ. Թո՛ղ առաքինութիւնն ու յոյսը զմեզ դարձեալ միացնէ։

ՑԱԿՈԲ. Եկուր գիրկս, որդեակ իմ Յովսէփ. ա՛ռ քեզի իմ համբոյրս, առէք դուք ալ իմ օրհնութիւնս, որդիք Իսրայելի. այս քաղցր մխիթարութիւնը որ կը զգամ, կ'ապահովցնէ զիս որ Աստուծոյ խոստմանցը լրանալու ժամանակը մօտեցաւ... մօտեցաւ այն ժամանակը յորում Իսրայէլ պիտի տիրէ բոլոր աշխարհիս՝ թշուառ մարդկութիւնը՝ երջանկացնելու համար։

ՁԳԻ ՎԱՐԱԳՈՅՐՆ

ՎԵՐՋ

ՅՈՎՆԱՆ Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆԻ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ

1. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ — ԱՅԲԲԵՆԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆ։ Բնական եւ դիւրագոյն մեթոդ կարդալ գրելու . . 1.50 Ղրշ.

2. ԻՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ եւ բնական ու բնապատմական նախնական ծանօթութիւնք։ 3 Ղրշ.

3. ԱՅԲԲԵՆԱՐԱՆ—ԸՆԹԵՐՑԱՐԱՆ ՖՐԱՆՍԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ. Դիւրուսոյց մեթոդով . . 1.50 Ղրշ.

4. ՊԶՏԻԿՆԵՐՈՒՆ ԵՐԳԱՐԱՆԸ. Հաւաքածոյ Մանկապարտէզի երգերու։ Դասագիրք Ընթերցանութեան եւ Արտասանութեան։ . . . . 3 Ղրշ.

5. ՊԶՏԻԿՆԵՐՈՒՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆԸ. Պատկերազարդ. Յատակագիծերով եւ քարտէսներով։ Դ. տիպ՝ նիմնովին բարեփոխուած . . 3 Ղրշ.

6. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ Տարրական Դասընթացք (Ա. եւ Բ. տարի). Պատկերներով եւ քարտէսներով։ Բ. Տպագրութիւն բարեփոխուած. 4 Ղրշ.

7. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ Բարձ. Դասընթացք. Պատկերազարդ. Բնական եւ քաղաքական. Ճոխ ծանօթութիւններով։ Մեծադիր. երես 200. 7 Ղրշ.

8. ՀԱՄԸ ՔԱՐՏԷՍՆԵՐ. Աշխարհագծութեան եւ դասերու վարժութեանց համար. 100 հատը 20 ղրշ.

9. ՊԶՏԻԿՆԵՐՈՒ ԹՈՒԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ. Պատկերազարդ . . . . . 3 Ղրշ.

10· *ԹՈՒԱԳԻՏ·* Տարr. Դասընթացք Ա. տարի 3 „
11· » » » Բ. » 3 „
12· » Միջին » Գ. » 4 „
13· » » » Դ. » 4 „
14· » Բարձr. » Ե. եւ Զ. » 12 „
15· » Ընդրձկ. տեսկ. եւ գործ. » 15 „

16· *ԱՐՈՒԵՍՏ ՏՈՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ* եւ վանառականական Գիտելիք. Պարզ տումար եւ կրկնատումար: Ամէն մարդ կարող է ինքն իրեն սորվիլ կարճ ժամանակի մէջ: Վարժարանաց համար յարմարագոյն դասագիրքն է իր պարզութեամբը եւ դիւրուսոյց մեթոտովը . . . . . 6 Ղրշ.

17· *ՆԱԽԱՏԱՐԵՐՔ* Գործնական երկրաչափութեան եւ Գծագիտութեան. Տարr. եւ Միջին 4 Ղրշ.

18· *ՏԱՐԵՐՔ* Գործնական երկրաչափութեան. Բարձr. Դասընթացք. Ա. տարի. 246 պատկ. 6 Ղրշ.

19· *ՏԱՐԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ ԳՐԱՀՇՈՒՈՑ·* Թուաբանական խնդրոց լուծմանը համար կիրարկուած. Պարզ բացատրութիւններով. 3 Ղրշ.

20· *ՆՈՑԻՆ ԲԱՆԱԼԻՆ* ի պէտս Ուսուցչաց 3 „

21· *ԳԱՆՁ ԻՐԱԳԻՏԱԿԱՆ· Առ աչք ուսուցման·* 300է աւելի պատկերներով. Տարr. Դասընթացքի համար. Իրագիտութեան դասագիրքերու նորագոյնը եւ ընտրելագոյնը . . . . . 5 Ղրշ.

22· *ՀԱՑԵԼԻ ՎԱՐՈՒՑ ԵՒ ՑԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԵԱՆ·* Միջնորդ հաղորդակցութեան ընդ մէջ դպրոցի եւ տան։ Ամէն աշակերտի համար անհրաժեշտ 50 փ.

23· *ՆԻՒԹ·* Հանդէս բանասիրական, Ուսումնական եւ Մանկավարժական . . . . . 10 Ղրշ.

24· *ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ* կ՚Պատրաստուի Գրադարանի

(սպառած)

Հ.Ս.Ի.Հ. Հանրային Գրադարան
Հ.Ս.Ի.Հ. Գիտութեանց Ակադեմիայի Գրադարան
Библиотека
7/XI—1922
Հայոց Ազգային Գրադարան
NL0335754

31078

ՓԱԼԱԳԱՇԵԱՆ ԳՐԱՏՈՒՆԸ

ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ Է ՀԵՏԵՒԵԱԼ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

ԿԱՆԱՑԻ ՎԱՏԱՄԵՐՈՒՄ. Կինը՝ անցեալին եւ ներկային մէջ. գեղեցկատիպ պատկերներով. Գրեց Տր. Բօլ տը Ռէկլա. Թրգմ. Ա. Գ. Ա. . . 10 Ղրշ

ՃԻԶՈՒԻԹՆԵՐՈՒ Լիակատար եւ ժամանակագրական Պատմութիւն. իրենց ոճիրները, ամբարշտութիւնները եւ արտասովմները: Հեղինակ Լէօ Թաքսիլ. Թարգմ. Յ. Գ. Փալագաշեան.60 Փրկ

ԲՈՂՈՔ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԴԷՄ. Եղիշէ Տ. Պողոսեան . . . . . 2 Ղրշ

Ի՞ՆՉ Կ'ԸՆԷ ԴՈՒՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ. Գրեց Յովհ. Մարգարեան, ... 60 Փրկ

ԿՆՈՋ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆԸ. Հեղինակ՝ Հանրի Մարիոն. Թարգմ. Կ. Ս. Թուխմանեան. 12 Ղրշ

ԾՐԱԳԻՐ ԲԱՐԵՆՈՐՈԳՄԱՆՑ. Գրեց Խրիմեան Հայրիկ. կիւրեղեանի (Հրանդ) Յառաջաբանով եւ Հայրիկին գինկատիպ պատկերով. 2 Ղրշ

ՔՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ. Լիակատար Ազգ. երգարան Հայոց. (Հրատր. Փալագաշեան). 7½ Ղրշ

ԳԱՐԵԳԻՆ ՍՐՈՒԱՆՋՏԵԱՑՑ. Ազգային Ողբերգութիւն չորս մասնով, Հեղինակութիւն Մարկոս Աղաբէկեանի. Բ. Տիպ. . . . . 5 Ղրշ

ՑՈՎՍԷՓ ԳԵՂԵՑԻԿ. Ողբերգութիւն. Թումանեան Թէրզեան. . . . . 2 Ղրշ